

## ԿՐՌՆԱԿԱՆ

### ՆԵՐՄԵՍ ԱՐՔԵՊԻՄԿՈՂՈՄ ԴՈԶԱՊԱՁՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 հունվարի 2000 թ.)

«Ծնալ նոր արքայ ի Բեթղեհեմ  
քաղաքի. որիիք մարդկան, օրինեցեք,  
զի վասն մեր մարմնացաւ»

(Շարական)

«Յանուն Նօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ. ամէն»:

Նոր արքա ծնվեց Բեթղեհեմ քաղաքում, ով դուք ժողովուրդ, օրինեցեք Ասպձուն, որովհեքը նա մեզ համար մարդացավ:

Մայթենոս և Ղուկաս ավելարանիշները հանգամանորեն մեզ նկարագրում են Հիսուսի ծննդյան պատրմությունը: Ղուկաս ավելարանիշը հերքույալ ձևով է խոսում և ասում. Հռոմի Օգոստոս կայսեր ժամանակ, երբ Ասորիքի ղեկավարն էր Իրենիոս անունով մի իշխանավոր, իսկ Հռեաստրանի թագավորը՝ Ներովիեսը, այդ ժամանակ Օգոստոս կայսրը հրահանգեց, որ բոլոր մարդիկ, իր կայսրության սահմանների մեջ ապրող, երթան որոշյալ մի դեղ, մասնակցելու համար մարդահամարին: Եվ որովհեքը Հովսեփը՝ Մարիամի ամուսինը, Դավթի ցեղից էր և Գալիլիայի Նազարետ քաղաքում էր ապրում, եղավ և ճանապարհվեց դեպի Բեթղեհեմ, որ մորավորապես 60-70 կմ հեռավորության վրա էր, և զիսեր նա, որ Մարիամը հղի էր և նրա վերջին օրերն էին: Երբ Բեթղեհեմ հասան, օթևան չգտան: Մարիամը ծանր հղության իր վերջին ժամերի մեջ էր և սրբավեցան մի ախոռ, մի մսուր գյոնել, և Մարիամը այնպես ծնունդ փվեց Ասրբածորդուն՝ Հիսոս Քրիստոսին:

Շարականագիրը այսպիս է՝ նկարագրում. «Անրաւելին երկնի և երկրի ի խանձարուր պատրեզա, ոչ մեկներով ի Տօր!՝ ի սուրբ այրին բազմեցաւ»։ Աշխարհի գերն ու գիրականը, աշխարհի մեծագույն իշխանավորը՝ Աստված, խանձարարուրով պատրիեց, ասում է՝ նրա խոնարհությունը նկատի ունենալով, և Տօրից քամանվելով, չափաբարվելով Նա մսուրի մեջ ծնվեց, Աստված խոնարհից՝ մարդանալով, և այս խոնարհությունը մեծագույն աստվածային սերն էր նշանակում մարդկության հանդեպ; Իսկ թիւ անդին, դաշտերի մեջ, հովիվներն իրենց հոգին էին արածեցնում, և ատրդը երկնքի փայլում էր լուսաճանանչ պայծառությամբ, իսկ հովիվները, հավանաբար զարմացած, իրենց աչքերը հառել էին լուսացուր ասդրին։ Նանկարծ հրեշտակներ երևեցան նրանց, երբ տեսան, պարստիեցան և վախեցան։ Նրեշտակները նրանց ասացին. Մի՛ երկնչիր, մի՛ վախենաք, ձեզ լավ լուր ենք բերել. այսօր Բեթղեհեմում ծնվեց Հիսուս մանուկը, հայրնեցին պարզ ու խոնարհ հովիվներին (Ղուկաս Բ 10): Երկինքն՝ այդ պահին բացվեց, երկնքից լուսեղեն էակներ՝ հրեշտակներ գունդ առ գունդ իջան երկիր, ավելինցին այդ խեղճ ու կրակ հովիվներին, որ պարակել էր ժամանակների լրմանը այն հրաշը, որ Խորայելի մարզաքեները դարեր շարունակ երազում էին ու ասում. Փառը ի բարձունս Աստվածուն երկիր վրա խաղաղություն, մարդկանց մեջ՝ հաճություն, սեր, հարգանք, հասկացողություն և խոնարհություն (Ղուկաս Բ 14):

Մինչեւ այս բոլորը պատրահում էին, ասդրի ճառագայթները հրապուրել էին նաև Արևելքում հայրին թագավորներին։ Վյո թագավորները, մոզեր կոչվելով, իրենց ուղիւնքի վրա նստած, օրեր շարունակ ճանապարհվեցին դեպի այդ լուսավոր ասդրը, և երբ Երուսաղեմ հասան, Ներովդիս թագավորի մոտ գնացին, նրա խորհուրդն ուզեցին իմանալ, ասելով, որ այս վայրում ասդրի հայրինվելը նշանակում է, որ մի թացարիկ մնալը՝ մի իշխանավոր, մի թագավոր է ծնվելու, արդյո՞ք գիրեր նրա գեղը։ Ներովդիսը խռովեց՝ կարծելով, թև ծնվող Հիսուսը թագավորությունն իր ձեռքից պիտի խլի, այդ պարճառով սարսափեց, խորամանկեց և ասաց նրանց. «Գնացեք, գդեք ասդրի և ծնված մանկան գեղը և վերադարձին ինձ է հայրներ, որպեսզի գնամ և երկրպագեմ նրան»։

Ինչ դաշտիր խորամանկություն էր այս մնալը։ Մոգերը, բնականաբար, հասկացան այդ։ Նրանք գնացին ասդրին հերքելով, գրան Հիսուսը Բեթղեհեմում, մսուրի մեջ ննջելիս, և անմիջապես իրենց թագերը իշեցրին գերին և խոնարհվեցին։ Առաջինը՝ Մելքոնը, ուսի վրեց, երկրորդը՝ Գասպարը, կընդ-

րուկ գրվեց, երրողը՝ Բաղդասարը, նրան զմուս ներկայացրեց: Առաջինը թագավորական իշխանություն էր՝ ոսկի, մաքոր, որ ոչ մեկ ձևով չի խաթարվում և ոչ մեկ իրերի կամ նյութերի խառնուրդից չի բաղադրվում: Ահավասիկ, երկար դարերից ի վեր բոլոր գիտնականները փորձում են այդ և չեն կարողանում. ոսկին իշխանություն էր, թագավորություն: Կնոքուկը քաղցր բուրմուճն էր՝ Զրիսպոսի քարոզությունը աշխարհի վրա, և այդ քարոզությունը մարդկության փրկության ուղիներ ցույց փալու ձևն էր, բայց ո՞վ էր լսողը ճշմարդության ձայնին, իսկ զմուսը, ինչ որ կանայք Ռիտոսի թաղման առիթով գնացին գերեզման նրա մարմինը զմուելու համար, այդ էր խորերդանշում, որ մահվան միջոց էր, սակայն մահվան դեմ հաղթանակ էր նշանակում:

Սիրելի հավաքացյալներ. ահավասիկ Զրիսպոսի ծնունդը Շայասքանյաց Եկեղեցին գրոնում է շուրջ 2000 գրարիներից ի վեր: Ճիշտ է, եթե Զրիսպոս ծնվել է մեկ թվականին, ապա Զրիսպոս 1999 գրարեկան պետք է լինի երկնքում, բայց երկնքում դարձի չկա, մեկ ժամը հազար դարի է, սահման չկա երկնքի ժամանակի հասկացողության, այդ իսկ պատճառով Ռիտոս մեզ համար միշտ ներկա է, միշտ կենդանի, միշտ մանուկ, միշտ մեզի լուսեղեն օրինակ հանդիսացող ճշմարիդ Վարդապետ: Սակայն այդ Վարդապետի կյանքի ուղին դժվար ուղի եղավ, բայց միշտ հաղթանակներով պսակվեց և հայողող Շարությամբ ամրողացանավ:

Այսօր, երբ Սուրբ Ծննդյան այս փառավոր հիշաբակը դրոնում ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճրագալույցի այս երեկոյան, մեր մաղթանքը և աղոթքը այն է, որ Ասպած մեր երկիրը ամուր, հասքապուն պահի, մեր ժողովուրդը բարօր պահի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին շինություն և պայծառություն պարզենի, Ամենայն Շայոց նորընդիմ Կաթողիկոսին երկար, քաջառողջ, շնորհներով լեցուն կյանք պարզենի, որպեսզի լուսեղեն ճանապարհներ բացվեն մեր առջև, և կարողանանք ճշմարդությամբ, հավաքարմությամբ, անկեղծությամբ, սիրով ծառայեն մեր Եկեղեցուն և մեր ազգին: Այսօր սրբեուանդ ասում եմ ձեզ, սիրելի հավաքացյալներ, Զրիսպոս իսկապես «ծնաւ և յայտնեցաւ. ծեզի, մեզի մեծ աւելիքիս»: